Արձանագրություն

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհրդի 2025 թ. փետրվարի 12-ի թիվ 6 նիստի

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է, և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ (միաձայն) հաստատեց օրակարգը, որում ներառված էին հետևյալ հարցերը.

Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչի ընտրություն: Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ. – Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչի ընտրության հարցը:

Նիստը նախագահող Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ ամբիոնի վարիչի մրցույթի համար դիմել է բ.գ.թ., դոցենտ Տարոն Դանիելյանը: Այնուհետև Ն. Մարտիրոսյանը խոսքը փոխանցեց ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղար Զարուհի Սարգսյանին՝ ներկայացնելու թեկնածուի կենսագրությունը: Նիստը նախագահող Ն. Մարտիոոսյանը առաջարկեց ծրագրային ելույթի համար սահմանել մինչև 10 րոպե: Գիտխորհրդի անդամները բաց քվեարկությամբ (միաձայն) համաձայնեցին: Ծրագրային ելույթով հանդես եկավ Տ. Դանիելյանը: Ելույթից հետո նախագահողի առաջարկով խորհրդի անդամները իրենց հետաքրքրող հարցերը ուղղեցին Տ. Դանիելյանին: Վերջինս պատասխանեց բոլոր հարցերին:

Այնուհետև նախագահողը գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց փակ, գաղտնի քվեարկության կարգը, ապա առաջարկեց փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներից ընտրել երեք հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով: Առաջարկվեցին գիտխորհրդի անդամներ Դ. Պետրոսյանի, Ա. Մարտիրոսյանի և Ա. Ավետիսյանի թեկնածությունները: Այլ առաջարկներ չեղան: Նախագահողն առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը: Գիտական խորհուրդը քվեարկեց միաձայն: Սահմանված կարգով անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն:

Այնուհետև հաշվիչ հանձնաժողովի նախագահ Դ. Պետրոսյանը հրապարակեց քվեարկության արդյունքները՝ տեղեկացնելով, որ գիտական խորհրդի 20 անդամներից քվեարկությանը մասնակցել է 19-ը: Բաժանվել է 19 քվեաթերթիկ, քվեատուփում առկա է եղել 19 քվեաթերթիկ: Ձայները բաշխվել են հետևյալ կերպ. կողմ՝ 11, դեմ՝ 7, անվավեր՝ 1: Նիստի նախագահը առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները: Խորհուրդը միաձայն կողմ քվեարկեց:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաշվի առնելով փակ, գաղտնի քվեարկության արդյունքները, բ.գ.թ., դոցենտ Տ. Դանիելյանին համարել ընտրված Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչի պաշտոնում:

ԼՍԵՑԻՆ. – Հայ-Ռուսական համալսարանի միջնորդությունը նույն բուհի Գիտության դեպարտամենտի գիտական հրապարակումների խմբագրման և գրախոսականի կազմակերպման գլխավոր մասնագետ, բ.գ.թ., դոցենտ Մարիա Էդուարդի Ավագյանի դոկտորական ատենախոսության թեման՝ «Ոճական առանձնահատկությունների և վերափոխումների հիմնախնդիրները Հայաստանի ռուսալեզու մամուլում և լրագրության մեջ (20-րդ դարի վերջ- 21-րդ դարի սկիզբ)» հաստատելու խնդրանքով:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Ն. Է Վարդանյան, Ա. Շ. Ավետիսյան:*

<u>ՈՐՈՇԵՑԻՆ.</u>- ա/ Հաշվի առնելով հնչած առաջարկները՝ մերժել առաջարկվող թեման հաստատելու միջնորդությունը:

բ/ Դիմել Հայ-Ռուսական համալսարանի համապատասխան ստորաբաժանմանը՝ Մ. Ավագյանի ատենախոսության թեման վերանայելու և վերախմբագրելու առաջարկով:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի հայցորդ Լիաննա Վիգենի Աբրահամյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման խնդրանքով:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Գ. Մ. Աբրահամյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Լիաննա Վիգենի Աբրահամյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Ճգնաժամային հաղորդակցության առանձնահատկությունները (ՀՀ մեդիամիջավայրի օրինակով, 2020-2025 թթ)»:

բ) Գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ., դոցենտ Տարոն Ռուդոլֆի Դանիելյանին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն.Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Ջ. ՍԱՐԳՍՅԱՆ